

ՄԱՆՎԵԼ ԵԳՈՐԻ ԱՍԱՏՐՅԱՆ
(Ծննդյան 90-ամյակի առթիվ)

Լրացավ հայ անվանի լեզվաբան Մանվել Եգորի Ասատրյանի ծննդյան



90-ամյակը: Ասատրյանը հայ այն լեզվաբան-գիտնականներից էր, որոնց կյանքն ու գործը հայրենական գիտությանը, հայրենի երկրին ու նրա իրական արժեքներին նվիրումի վառ դրսևորումներ են: Նրա ուսումնասիրությունների կենտրոնում են եղել ինչպես արդի հայերենի կառուցվածքային հիմնախնդիրները, այնպես էլ հայերենի բարբառային ծավալումները: Հեղինակել է աշխատություններ, որոնք իսկապես արժեքավոր ներդրումներ են հայերենագիտության մեջ, ունեն մնայուն արժեք:

Ծնվել է 1926 թ. Էջմիածնի շրջանի (այժմ՝ Արմավիրի) Արագած գյուղում: Բարայան-Ասատրյանների գերդաստանը Խոյից՝ պատ-

մական Հերից նախնիների հայրենիք՝ Հայաստան է վերաբնակվել Ռուսաստանի և Պարսկաստանի միջև կնքված Թուրքմենչայի պայմանագրից հետո: Գերդաստանի երկրորդ՝ Ասատրյան ազգանունն ընդունվել է ի հիշատակ հայրական նախապապի՝ Ասատուրի (ի դեպ, Մանվել թոռն ու իր հորեղբորորդին են այն կրել առաջինը): Նախնական կրթությունն ստանալով հայրենի գյուղի 7-ամյա դպրոցում՝ գերազանցությամբ ավարտում է այն և ընդունվում Էջմիածնի մանկավարժական տեխնիկում: Տեխնիկումը գերազանցությամբ ավարտած 16-ամյա խոստումնալից պատանուն անմիջապես նշանակում են մանկավարժական աշխատանքի: Երկու տարի շրջանի դպրոցներում ուսուցչություն անելուց հետո (դասավանդել է մաթեմատիկա)՝ 18 տարին լրանալուն պես, զորակոչվում է խորհրդային բանակ (ծառայել է թիկունքային զորամասերում): 1946 թ. զորամասի հետ հասել է Գերմանիա: Նույն թվականին վաղաժամկետ զորացրվել է և վերադարձել հայրենիք: Տեխնիկումի գերազանցության վկայականով ընդունվել է Երևանի համալսարանի բանասիրական ֆակուլտետ: Այստեղ էլ հանդիպում է իր կյանքի ուղեկցուհուն՝

շնորհաշատ և բարձր ընդունակություններով օժտված Ժենյա Ճշմարիտյանին: Համակուրսեցիներ զույգն ամուսնանում է ուսումնառության վերջին տարում՝ 1951 թվականին: Երկուսն էլ համալսարանն ավարտում են գերազանցության դիպլոմով: Նույն թվականին Մ. Ասատրյանն ընդունվում է ասպիրանտուրա: Ղեկավարն էր ակադեմիկոս Գ. Սևակը: 1954 թ. պաշտպանում է թեկնածուական ատենախոսություն՝ «Բայի սեռերը ժամանակակից հայերենում» թեմայով, իսկ 1970-ին «Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր» աշխատության հրապարակային պաշտպանությամբ ստանում է բանասիրության դոկտորի գիտական աստիճան:

Մ. Ասատրյանը համալսարանական այն լեզվաբաններից էր, որոնք միշտ էլ եղել են մասնագիտական վիճարկելի խնդիրների կիզակետերում, միշտ էլ առաջատար ու կենտրոնական դեմքերից մեկը: Բավական է հիշել 1967 թ. աշնանը ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի նախաձեռնությամբ կազմակերպված բանավեճը հայերենի հոլովաքանակության շուրջ, ուր Մ. Ասատրյանը կրքոտ ու հարուստ փաստարկներով հիմնավորված ելույթներ էր ունենում՝ ի պաշտպանություն արեղյանական հինգ հոլովի տեսության, որոնք գրեթե անառարկելի էին մնում նույնիսկ «ամենաձախ» յոթհոլովականների կողմից:

Մ. Ասատրյանի գիտական վաստակի մեջ առավել աչքի են ընկնում արդի հայերենի ձևաբանության ու շարահյուսության հարցերին նվիրված աշխատությունները: 1970, 1973 և 1977 թվականներին հաջորդաբար հրատարակվում են «Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր» աշխատության երեք հատորները, որոնցում հանգամանորեն, հաճախ պատմական ու տարածքային դրսևորումներին անդրադառնալով, վերլուծված են հայերենի խոսքի մասերի ձևակազմական ու իմաստային բոլոր առանձնահատկությունները՝ ներկայացնելով նաև տվյալ խնդրին անդրադարձած բոլոր հայագետների տեսակետներն ու ըմբռնումները: Աշխատության առաջին հատորն ընդգրկում է գոյական անունների ու կապերի քննությունը: Այս երկու խոսքի մասերի քննությունը միասնաբար է կատարված՝ ելնելով այն սկզբունքից, որ «... գոյականի շարահյուսական հարաբերությունները խոսքի մեջ արտահայտվում են կա՛մ հոլովական ձևերով, կա՛մ կապերով»¹: Հեղինակը նորովի ու յուրովի է մեկնաբանել քերականական մի շարք իրողություններ:

¹ Մ. Ա ս ա տրյ ա ն. Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, հ. Ա, Երևան, 1970, էջ 3:

Աշխատության երկրորդ հատորը հայերենի ածական, թվական անունների, դերանունների ու բայական անդեմ ձևերի քննությունն է: Այստեղ մանրամասնորեն են վերլուծված հատկապես դերանուններն ու դերբայները, որովհետև բառերի այդ խմբերի հետ «...առնչվում են պատմական ու տեսական բնույթի բազմաթիվ հարցեր»², որոնք հայ քերականագիտության մեջ երկար վեճերի ու տարաբնույթ մեկնությունների առիթ են տվել: Հենց այդ բաժիններում է, «... որ նոր մեկնակետերից են քննվում ու լուսաբանվում ժամանակակից հայոց լեզվի մի շարք հարցեր»³:

«Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր» աշխատության երրորդ վերջին հատորում քննարկված են բայի դիմավոր ձևերը, մակբայները, շաղկապները, եղանակավորող բառերն ու ձայնարկությունները: Այստեղ ևս, ըստ անհրաժեշտության, այս կամ այն երևույթի մասին ավելի ամբողջական գաղափար տալու համար, հեղինակն օգտագործել է նաև գրաբարի, միջին հայերենի, արևմտահայերենի, ինչպես նաև բարբառային փաստերը: Աշխատության երեք հատորներում էլ լեզվական իրողությունների քննությունը կատարված է համաժամանակյա հայեցակետով:

Հայ քերականագիտության մեջ արժեքավոր ներդրում է նաև Մ. Ասատրյանի «Ժամանակակից հայոց լեզու. շարահյուսություն» (1987) աշխատությունը, որը նվիրված է հայերենի բառակապակցությունների ու պարզ նախադասության կառուցվածքային առանձնահատկությունների ու դրանց դրսևորումների քննությանը:

Մ. Ասատրյանի հայերենագիտական հարուստ գիտելիքների ու լեզվաբանական նուրբ դիտողականության, վերլուծությունների խորքայնության դրսևորում է նաև «Բայի սեռերը ժամանակակից հայերենում» (1959) աշխատությունը, որը հեղինակի հետազոտական աշխատանքների առաջին արտահայտություններից է: Այստեղ հեղինակը ներկայացնում է բայի սեռերի ձևաբանական տարբերակման պատմական ողջ ընթացքը՝ սկսած գրաբարից մինչև արդի հայերեն:

Ըստ Ասատրյանի, գրաբարում ներգործական ու կրավորական սեռերի համար ընդհանուր որոշ ժամանակաձևերի առկայությունը բացատրվում է այն բանով, որ սկզբնապես բայական հիմքերը չեն տարբերակել անցողականությունն ու անանցողականությունը: Ըստ հեղինակի, «... կ-

² Մ. Ա ս ա տրյ ա ն. Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, հ. Բ, Երևան, 1973, էջ 4:

³ Նույն տեղում, էջ 4:

րավորական սեռը արտահայտվել է ոչ թե բայի ձևերի փոփոխությամբ, այլ ամբողջ նախադասության կառուցվածքով»⁴: «Պետք է ենթադրել, որ «դատիմ, դատեցայ զքեզ» և «դատիմ դատեցայ ի քէն», «բանան զաչս իմ» և «աչք իմ բանան» «լնու զտիկն ջրով» և «տիկն լնու ջրով» օրինակներում բայերը նորգործական ու կրավորական սեռերի արտահայտման ավելի հին սիստեմ են ներկայացնում, քան «որդի սիրէ զհայր» և «հայր սիրի յորդոյ» նախադասությունների մեջ «սիրել» բայը, ուր այդ տարբեր սեռերի իմաստներն արտահայտելու համար նա կրում է նաև ձևաբանական փոփոխություն»⁵: Եզրակացությունն այն է, որ կրավորական սեռի առանձին ձևերի ստեղծումը սկսվում է նախագրաբարյան շրջանից և ավարտվում միջին հայերենի վերջերին:

Մ. Ասատրյանը կատարել է նաև բարբառագիտական հետազոտություններ: Մենագրական քննությունների է ենթարկել արևելյան տարածքների մի քանի տարածքային տարբերակներ: Դրանցից են՝ «Ուրմիայի (Խոյի) բարբառը (1962), «Լոռու խոսվածքը» (1968) աշխատությունները: Թե որքան կարևոր է լեզվաբանի համար իր ուսումնասիրությունների ոլորտ ընդգրկել նաև բարբառային փաստերը, բավական է հիշել Ուրմիայի բարբառում դերանվանական *ս, դ, ն* արմատական տարբերի վերամաստավորումը խնդրային ու պարագայական իմաստներով: Այսպես՝ «Մէ ծի պրոնէնքը (մի ձի բռնէնք քեզ համար)», «Ասելի նա շատ քաղցր յէլ՝ ուտէնք (քեզ), նա շատ թառ յէլ՝ թալէնք (քեզ) (Առակն ասում է՝ ոչ շատ քաղցր եղիր, որ ուտեն քեզ, ոչ էլ շատ դառը, որ նետեն քեզ)»: Գրաբարում դերանվանական *ս, դ, ն* արմատական տարբերը, բացի հոդային իմաստներից, որ հարաբերականին կից բառի վրա դրվելով՝ արտահայտում էին նաև հարաբերակից գլխավոր նախադասության հարաբերյալի իմաստ, ինչպես՝ «... որ ասենն» (այն, որ նրանք ասում են):

Մ. Ասատրյանը, ըստ «Հայ բարբառագիտություն» դասընթացի բուհական ծրագրի, կազմել է նաև «Հայ բարբառագիտության գործնական աշխատանքների ձեռնարկ» (1985), որի անհրաժեշտությունը ժամանակին խիստ զգալի էր:

Բարբառագիտական վերլուծությունների լավագույն արտահայտություն է նրա «Հայ բարբառների բազմահատկանիշ դասակարգումը» («Բանբեր Երևանի համալսարանի», 1982, - 1) հոդվածը, որը ակադեմիկոս Գ. Ջահուկյանի «Հայ բարբառագիտության ներածություն»

⁴ Մ. Ա ս ա տրյ ա ն. Բայի սեռերը ժամանակակից հայերենում, Երևան, 1959, էջ 27:

⁵ Նույն տեղում:

(1973) աշխատության գրախոսականն է: Հեղինակը Գ. Ջահուկյանի աշխատությունն ըստ արժանվույն գնահատելուց հետո անում է որոշ դիտողություններ բարբառախոս վայրերի ընտրության ու դասավորության, բարբառային հատկանիշների ընտրության ու դրանց արժեքի, հատկանիշների գնահատման չափանիշների, համեմատության էտալոնի, ինչպես նաև բարբառային տարբեր միավորների ներկայացված փոխհարաբերությունների վերաբերյալ, որոնք հիմնականում ընդունելի են:

Մ. Ասատրյանի գիտական վաստակը չի սահմանափակվում միայն նշված աշխատանքներով: Նա հեղինակ է նաև բազմաթիվ այլ հոդվածների, գրախոսականների, որոնք հրատարակվել են գիտական տարբեր պարբերականներում:

Մ. Ասատրյանը մեծ ավանդ ունի նաև մանկավարժության ասպարեզում: 1950-ականների սկզբից մինչև իր կյանքի վերջը նա դասախոսել է Երևանի պետական համալսարանի ժամանակակից հայոց լեզվի ձևաբանություն, շարահյուսություն, հայ բարբառագիտություն առարկաները, նաև՝ հատուկ դասընթացներ: Պատրաստել է բանասեր մասնագետների բազմաթիվ սերունդներ, որոնք այսօր աշխատում են հայագիտության ու հայ մշակույթի տարբեր ոլորտներում:

1990 թ. մինչև 1995 թ. Մ. Ասատրյանը ղեկավարել է Երևանի պետական համալսարանի հայոց լեզվի պատմության ամբիոնը: Մահացել է 2000 թվականին:

Այսօր էլ դեռ նրա գործընկերներն ու երախտագետ աշակերտները հիշում են սիրելի ուսուցչի, անաչառ գործընկերոջ առողջ կատակները, սրամիտ ու համով-հոտով անեկդոտները, կրքոտ վեճերը, ստեղծագործ դասախոսությունները:

ԳԱՂԹՈՒՀԻ ՀԱՆԱՆՅԱՆ